

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇՈՒՄ Գիտակրթական կենտրոն ՀԿ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Պետականության գաղափարի ամրապնդումը հայոց
պատմության դասերին

Կատարող՝ Մարիամ Քերոբյան Պերճի

Մեղրաշենի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ, Պատմություն

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

ԳՅՈՒՄՐԻ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ	7
3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔ	12
4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	20
5. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	23

Ներածություն

Հայրենիք մի սպասեք օտարից և ճակատագրից,
եթե դա ձեր արյունով պաշտպանելու չափ
հայրենասեր չեք:

Գարեգին Նժդեհ

Աշխատանքի նպատակն ու խնդիրները: Աշխատանքում ուսումնասիրվում է «Պետականության գաղափարի ամրապնդումը հայոց պատմության դասերին» թեմայի առանձնահատկությունները և դասավանդման մեթոդները: Աշխատանքի շրջանակներում հայոց 5000-ամյա պետականության պատմության համառոտ ներկայացմամբ, փորձել եմ հիմնավորել պետականության գաղափարի ամրապնդման արդիականությունը և անհրաժեշտությունը հայոց պատմության դասերին: Յուրաքանչյուր ոք, ով ուսուցչի կոչմամբ մուտք է գործում կրթական միջավայր, ունի իր ուսերին դրված առաքելություն՝ այն է կրթելու և դաստիարակելու հայրենիքին և պետությանը արժանի, պատվախնդիր, բարոյական, ազգային և ավանդական արժեքները բարձր պահող անհատներ: Աշխատանքում ներկայացվում են այն հնարները և մեթոդները, որոնք կօգնեն ուսուցչին առավել պատկերավոր ներկայացնել թեման և տալ հիմքային գիտելիքներ և այս ամենը կատարել ոչ ուսուցչակենտրոն այլ աշակերտակենտրոն սկզբունքով:

Աշխատանքի նպատակը

- Հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիքի ձևավորում
- Նպաստել պետականակիր գիտակցություն, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական ժողովրդի ու պետության դերակատարումը պատմության խորապատկերում գիտակցող քաղաքացու զարգացմանը,

- Ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացու ձևավորում,
- Օգնել գիտակցելու, որ Հայաստանի Հանրապետությունը Պատմական Հայաստանի մեզ ժառանգություն մնացած մասն է, որ Հայաստանի և Արցախի Հանրապետությունները հայոց պետականության ժառանգորդներն են և մարմնավորում են ամբողջական հայրենիքի գաղափարը:
- Բացահայտել և հիմնավորել հայ դպրոցականի ազգային արժեհամակարգի, ազգային մտածելակերպի ձևավորման գործընթացում պատմության առարկայի դերն ու կարևորությունը, նաև պատմությունից դասեր քաղելու անհրաժեշտությունը:
- Բացահայտել սովորողների վերաբերմունքը ազգային հերոսների, պատմական կարևոր իրադարձությունների վերաբերյալ իրենց ունեցած գիտելիքները, վերհանել սխալները, թերությունները:
- Կիրառել մեթոդական հնարներ, ուսուցման ժամանակակաից մեթոդներ սովորողների մոտիվացիան բարձրացնելու համար:
- Դպրոցական խմբակների շրջանակներում, ինչպես նաև դասաժամերին անդրադառնալ հայ ազգային հերոսների կերպարներին, սխրանքներին, որոնք ավելի կոզևորեն սովորողներին, կդաստիարակեն հայրենասիրության ոգով:
- Հպարտությամբ, արժանապատվությամբ ու հարգանքով լցնել աշակերտների սրտերը հայոց պետականության տարբեր փուլերի, Հայաստանի երեք հանրապետությունների, Արցախի Հանրապետության, նրանց ձեբբերումների, բանակի, պետական խորհրդանիշների, տոների ու մայրաքաղաքների հանդեպ:

Վերը նշված նպատակներից բխող խնդիրներն են.

- Բացահայտել ինչ է պատմության դասը և ինչպես է հնարավոր լավագույնս կազմակերպել այն,

- Բացահայտել նշված թեմայի ուսումնասիրության կարևորությունը մեր օրերում,
- Փորձել առանձնացնել այն մեթոդները, որոնք լավագույնս կհամապատասխանեն թեմայի ուսումնասիրությունը հիմնական և ավագ դպրոցի աշակերտների հետ աշխատելիս, նրանց տարիքային առանձնահատկություններին համապատասխան:
- Ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:
- Պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից աշխարհի գլոբալացման և աշխարհակարգի ձևափոխման պայմաններում վտանգված է հայոց ինքնության և պետականության պահպանման հիմնահարցը: Հայ ժողովուրդը մշտապես ապրել ու արարել է մի տարածաշրջանում, որտեղ միշտ հատվել ու բախվել են տարբեր ազգերի ու քաղաքակրթությունների շահերն ու հակասությունները: Այս հանգամանքն ավելի կարևոր է դարձրել այս «քաղաքակրթական խաչմերուկներում» ազգային նկարագիրն ու դիմագիծը անադարտ պահելու հանգամանքը: Մարդկության պատմության արդի փուլում հայ ժողովուրդը դարձյալ բախվում է այս խնդրին, քանի որ մեր տարածաշրջանում դարձյալ բախվում են աշխարհի մեծ պետությունների շահերը: Ազգային արժեքները պահպանելը կարևորագույն խնդիր է հատկապես, երբ Հայաստանը ծայրահեղ ծանր օրեր է ապրում՝ պարտության դառնահամը բերանում, կորցրած տարածքների ավստասանքը սրտում (տարածքներ, որ ընդամենը երեսուն տարի առաջ ձեռք էին բերվել մեր զավակների թանկ արյան գնով), հազարավոր նոր զոհերի կսկիծը սրտում...: Պայմանավորված այս և այլ հանգամանքներով, գտնում եմ, որ թեմայի ուսուցումը ոչ միայն արդիական է նաև անհրաժեշտ:

Գրականության տեսությունը: Օգտագործել եմ մեթոդական ձեռնարկներ, գրքեր, դասգրքեր, հոդվածներ, ինչպես նաև թեմայի վերաբերյալ համացանցային աղբյուրներ:

Հետազոտության մեթոդներ: Օգտագործել եմ պատմա-հետազոտական, պատմա-վերլուծական, համադրման, հակադրման, պատմահամեմատական մեթոդներ:

Աշխատանքի առարկան և օբյեկտը: Աշխատանքի առարկան «Պետականության գաղափարի ամրապնդումը հայոց պատմության դասերին» թեմայի դասավանդումն է դպրոցում, իսկ օբյեկտը այն մեթոդների համախումբն է , որոնց միջոցով կազմակերպվում է այս թեմայի դասավանդումը:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 2 գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքը կազմված է 23 տպագիր էջից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

«Աստվածներից առաջիններն ահեղ էին և երևելի, և աշխարհի մեծամեծ բարիքների պատճառ, աշխարհի ու բազմամարդության սկիզբ: Սրանցից առաջ եկավ հսկաների սերունդը...

Սրանցից մեկն էր ... Հայկը »:

Մավսես Խորենացի

«Հայոց Պատմություն»

Հազարամյակների խորքից ավանդված հայոց ծննդաբանության տարեգիրքն այսպես է ներկայացնում մեր պատմության արշալույսը: Հայկական ազգային ավանդությունը Հայաստանի անկախ պետականության հիմնադրումը կապել է դյուցազն, արարչագործ Հայ(ա) աստծո հետ: Նա քրիստոնեության պետականացումից հետո «մարդեղացվելով»՝ համարվել է մեր ազգածին նահապետը: Նա էր, որ հիմնեց հայկական պետականությունը և պատվիրեց յուրայիններին՝ չպաշտել ոչ ոքի, բացի Արարչից...

Մեր հայրենիքը գիտության մեջ իրավացիորեն կոչվել է Հայկական լեռնաշխարհ: Այս լեռնաշխարհում է, որ կերտվեց ու իր հազարամյակների պատմությունն ունեցավ Հայոց պետականությունը... Հայերն աշխարհի հազվադեպ ժողովուրդներից են, որ կարող են հպարտանալ գրավոր վկայված հինգհազարամյա պատմություն ունենալու փաստով: Ընդ որում, հպարտությունն այդ երիցս արդարացված է, քանի որ նրա պատմությունը ոչ թե աննշան կամ վայրի ցեղերի մասին հիշատակումներ են, այլ՝ պետականության ու քաղաքակրթության հազարամյակների գրավոր վկայություններ: Հպարտության կարևոր պատճառ է նաև այն, որ գրավոր վկայված պատմության հինգհազարամյակից շուրջ չորս հազար տարվա ընթացքում հայերն ունեցել են պետականություն: Պատմության մեջ ոչ մի ժողովուրդ չի խուսափել անկումներից: Մեր պատմության մեջ էլ քիչ չեն անկումներն ու վրիպումները, որոնք անընդհատ մղում են դրանցից դասեր քաղելու մտքին: Ամենաձանր ու տևական անկումը Հայաստանի

պատմության մեջ XIV դարավերջից մինչև 1918թ. ընկած ժամանակաշրջանն էր: Այն հաղթահարվեց 1918թ. մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության ստեղծումով և մեր պետականության պատմության մեջ հանրապետական դարաշրջանի սկզբնավորմամբ: Նորանկախ հանրապետությունը, սակայն ունեցավ երկուսուկես տարվա կյանք: Դրան հաջորդած Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը կախյալ պետականություն էր, բայց և այնպես, ամրապնդեց հայերի մեջ բավականին թուլացած պետականության գաղափարը: Ի վերջո, Արցախյան ազատամարտով սկիզբ առած հայ նորագույն ազատագրական պայքարը տվեց իր արդյունքը, 1991թ. վերականգնվեց հայկական անկախ պետականությունը՝ ի դեմս Հայաստանի և Արցախի հանրապետությունների: Անդրադառնալով հայկական նորանկախ երկու պետությունների երեսունամյա գոյությանը, կարևորում եմ ձեռքբերումների ու բացթողումների վերլուծությունը: Ի շահ մեր հետագա զարգացման, անհրաժեշտ է հետադարձ հայացք ձգել նաև պետականության մեր անցյալի պետականություններին և դրանց պետական կառավարման համակարգերին: Այդ նպատակին ծառայելու է կոչված նաև ներկայացվող հետազոտական աշխատանքը, որում հայոց պետականությունների պատմության համառոտ ներկայացմամբ, կփորձեմ հիմնավորել պետականության գաղափարի ամրապնդման արդիականությունը և անհրաժեշտությունը հայոց պատմության դասերին: Հայոց պատմությունն առարկան միշտ իր կարևոր ներդրումն է ունեցել հայ մանուկների ազգային մտածելակերպի, ազգային արժեքների ձևավորման գործընթացում: Դարեր շարունակ մեր պատմիչների աշխատություններն օգտագործվել են որպես դասագիրք և ազգային, հայրենասիրական ոգով դաստիարակել բազում սերունդներ: Պետականությունը հասարակության կազմակերպման բարձրագույն ձևն է: Ազգային պետականությունը՝ ազգի կազմակերպման բարձրագույն ձևը, ազգի առջև ծառայած խնդիրների լուծման հնարավորությունն է, նրա դեմ ուղղված անվտանգության մարտահրավերների չեզոքացման ամենաարդյունավետ միջոցը: Ազգային պետությունն է տվյալ ազգի լինելիության գրավականը, ազգային ինքնության

պահպանման ու տնտեսական զարգացման անսասան հիմքը: Յուրաքանչյուր ժողովուրդ պատմության բեմահարթակ իջնելու պահից ձեռնամուխ է լինում իր գոյապահպանության համակարգի կառուցմանը, որի հիմնական խնդիրն է՝ Ազգային գաղափարության ստեղծումը, նրա ազատ,անկախ, անվտանգ ու բարեկեցիկ կյանքի զարգացման, ինքնապահպանման և հարատևման միտումը: Իսկ ազգապահպանության միջնաբերդը բոլոր ժամանակներում եղել և մնում է դպրոցը: Այսօր մեր դպրոցում պետք է գերակայի ազգային գաղափարախոսությունը: Դասագիրքը պետք է ոչ միայն արձանագրի հայոց պատմության փաստերը, այլև շունչ ու ոգի հաղորդի դրանց: Դասագիրքը միջոց է, բայց ոչ նպատակ: Մենք՝ ուսուցիչներս, գիտակցելու ենք ուսուցչի բացառիկ դերը՝ հայ երեխային ազգային ոգի ներարկելու, նրան համարժեք կրթություն և դաստիարակություն տալու գործում: Այդ մարտադաշտում մեզ համար փարոս և ուղեցույց են Գարեգի Նժդեհի խիստ արդիական տեսակետները՝ հայրենիքի, հարազատ ժողովրդի, հայ երեխայի ապագայի մասին: «Ով հայրենապաշտ և գաղափարապաշտ երիտասարդություն ունի՝ նա էլ ապագա ունի», - սա է ռազմական գործչի ու մեծ փիլիսոփայի համոզմունքը: Մեր հարափոփոխ աշխարհում ինչքան էլ որ փոխվեն հասարակությունների մտածելակերպը, արժեհամակարգը, վերաբերմունքը ժամանակակից երևույթների ու գործընթացների հանդեպ, միևնույն է մատաղ սերնդին պետք է դաստիարակել ազգային արժեքներով ու հերոսական անցյալի օրինակներով: Այսօր մեր ժողովուրդը նորից փորձությունների մեջ է: Այս պայմաններում կենսական անհրաժեշտություն է ձեռք բերում անցյալի դժբախտությունից ճիշտ եզրակացություն անելը: Քանզի չի կարող գոյատևել որևէ ժողովուրդ, որն իրեն պաշտպանել չի կարողանում: Չի կարող գոյատևել որևէ ժողովուրդ, որը զուրկ է քաղաքական խաչբառերը լուծելու կարողությունից, չի կարող գոյատևել որևէ ժողովուրդ, եթե նա սպառնացող վտանգի առաջ չի կարողանում իր բոլոր ուժերը միավորել: Ուստի խիստ անհրաժեշտ է երեխաների մեջ հավատ ներշնչել հայրենիքի ապագայի նկատմամբ, սխալներն ուղղելու անհրաժեշտությունը գիտակցելու, ոտքի կանգնելու, նոր ուժեղ

հայրենիք ստեղծելու ուղի մատնանշել: Պատանիների մեջ պետք է արմատացնել, որ հայրենիքն է ամենաբարձր արժեքը: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Արժեքների բուրգի գազաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է, որը լավագույն կերպով մատուցվում է հայոց պատմության դասընթացների ժամանակ: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր հերոսական անցյալը, մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները: Հայկական պետականությանը նետված մարտահրավերները հրատապ են դարձնում հայրենիքի ապագա պաշտպանների պատրաստման խնդիրը: Այս գործը մշտական կատարելագործման կարիք ունի: Պատահական չէ, որ պետական մակարդակով խրախուսվում է երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Դրանում մեծ է ազգային հերոսների կերպարների հանրահռչակման և այդ ոգով աշակերտներին կրթելու նշանակությունը: Հայ ժողովուրդն իր պատմության ողջ ընթացքում հերոսների պակաս չի զգացել, որոնց շնորհիվ դիմացել է հազարամյակների դաժան փորձություններին: Այդ հերոսների օրինակով մենք կրթում և դաստիարակում ենք մեր սաներին, որոնք իրենց իդեալն են դարձրել այս կամ այն նվիրյալին: Հայոց ազատագրական պայքարի դրվագները հայության ինքնահաստատման և դաժան գոյապայքարի վկայություններն են, որոնք ոգևորում են սերունդներին սովորեցնելով քննախույզ մոտեցում դրսևորել անցյալի իրադարձությունների նկատմամբ, կատարել ճշմարիտ եզրահանգումներ և քաղել իրատեսական դասեր: Հայոց պատմության յուրաքանչյուր դասին նախապատ -

րաստվելիս կարևորում եմ բովանդակային մասերը, որոնք նվիրված են հայ ազատամարտի նշանավոր գործիչներին և ոգեշնչում ու հայրենասիրությամբ են վարակում սվորողներին: Դա առավել նպատակային և դյուրին է դառնում ազգային-ազատագրական պայքարի թեմաներն ուսումնասիրելիս: Առաջնահերթություն է, որ աշակերտները բացահայտեն, հետազոտեն հայոց պատմության վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերը և վերհանեն հույժ կարևոր փաստերից մեկը, այն է, որ հայ ժողովուրդը եկվոր չէ, այլ ձևավորվել ու պատմական հազարամյա ուղին անցել է իր բնօրրանում` Հայկական լեռնաշխարհում:

Հայ ժողովուրդը, շփվելով և փոխազդեցությունների մեջ լինելով տարբեր քաղաքակրթությունների հետ, պահպանել ու զարգացրել է իր ինքնատիպ մշակույթը, ազգային նկարագիրն ու գոյապատկերը: Դրա շնորհիվ հայությունը հազարամյակների միջով հասել է մարդկության պատմության արդի փուլին:

Ահա թե ինչու հայկական մշակութային հարուստ ժառանգության համակողմանի ուսումնասիրումը կազմել է դասագրքերի կարևոր բովանդակային ուղղություններից մեկը: Հայոց պատմության բովանդակային առանցքը կազմել է նաև հայկական պետականության պատմությունը, որը սերտորեն կապվում է նույն քաղաքակրթական խնդիրների հետ:

Դպրոցականների ազգային մտածողությունը խթանելու նպատակով պետք է սովորողներին հանձնարարել լրացուցիչ նյութեր հավաքել օրինակ, Լևոն Գ-ի թագադրության ժամանակ արքունի ատենադպիր, իմաստասեր Վահրամ Բաբունու շնորհավորանքի խոսքը, Արամ Մնուկյանի կոչը, Ռուբենի նամակը որդուն, հայդուկների, ազատամարտիկների կյանքի, գործունեության վերաբերյալ: Այս ընթացքում սովորողները կհարստացնեն իրենց գիտելիքները տվյալ նյութի շուրջ, նաև կսովորեն ինքնուրույն օգտվել այլ աղբյուրներից, գատել տեղեկույթի կարևորն ու երկրորդականը, հանգել ինքնուրույն եզրահանգումների, ձևավորել սեփական դիրքորոշումը:

Հետազոտության ընթացքը

Թե դու հա՛յ ես՝ հայությունդ պիտի հարգես անպատճառ,
Հայաստանը պիտի լինի հուսո աստղ քեզ համար,
Օտարինը դու մի ատիլ, մի էլ սիրի կուրորեն,
Բայց քո հայի օգուտները միշտ վեր դասե ամենեն:

Ռ. Պատկանյան

Ես՝ որպես պատմության ուսուցիչ, ելնելով ուսուցման անձնական մեթոդից և արդյունքից, առաջնորդվում եմ մեր մեծ հայի և անգուգական ազգային գործչի՝ Գարեգին Նժդեհի գաղափարախոսությամբ, իմ բոլոր դասերը ներծծված են նրա ազգային գաղափարներով: Ուսուցիչն իր օրինակառվ պետք է կարողանա երեխայի մեջ ներարկել ազգային ոգի, արժանապատվություն, բացառի պարտվողական տրամադրությունները, հասնի նրան, որ երեխան անսահմանորեն սիրի իր ազգը, իրեն համարի տեր և պաշտպան իր երկրի: Չմոռանանք՝ ազգային ոգին ապահովեց մեր հաղթանակն Արցախյան ազատամարտում: Երեխային ազգային գաղափարներ կարելի է ներարկել դասաժամերին, դասից դուրս, դասագրքով, առանց դասագրքի, խոսքով, անձնական օրինակով: Մեր պատմության փառահեղ էջերին, հերոսական քաջորդիներին նվիրված միջոցառումները, նահատակների հիշատակի խնկարկումները և նրանց օրինակներով դաստիարակելը, պատմամշակութային վայրեր այցելությունները սովորողների մեջ արթնացնում և ամրապնդում են ազգային ոգին: Փորձը ցույց է տալիս, որ աշակերտները մեծ հետաքրքրությամբ են լսում հատկապես պետական գործիչների, ազատագրական պայքարի նվիրյալների կյանքի ու գործունեության մասին պատմող դրվագները:

«Մեկից ավելի անգամ դժբախտություն եմ ունեցել լսելու ազգային պատմություն դասավանդող ուսուցչին և խորապես ցավել եմ մեր աշակերտող սերնդի համար: Մի կենդանի մեռել, մեռյալ շեշտերով խոսում է մեռելների մասին: Պատմությունը նրա համար անհոգի կմախք է և ոչ թե բաբախուն սիրտ: Նա հետևակ գիտելիքներ ունի

մեր պատմության այս կամ այն շրջանի մասին, գիտի ցամաք, անցքեր, թվեր, անուններ, այսքանը միայն: Նա սիրտ չունի և սիրտ չի դնում իր դասերի մեջ: Միևնույն տրամադրությամբ նա խոսում է Տիգրան Մեծի և Վեստ Սարգիսի մասին: Հպարտանքից չեն դողում, չեն լայնանում նրա ռունգերը, երբ պատմում է, թե ինչպես պարսից արքան, հայ սպարապետի անօրինակ քաջագործություններից հիացած, ամեն անգամ, երբ գինու բաժակը շրթունքներին կմոտեցներ, կղժվարանար չբացականչել՝ «Ճերմակաձին գինի խմե»: Ամոթի զգացումը չի այրում նրան, երբ իր խոսքը հայ խոռվասեր նախարարի չարագործությունների մասին է: Սեղմ ասած՝ ստեղծագործ վերապրում չէ նրա ավանդած պատմությունը, այլ անհոգի հնախոսություն, քանզի իրեն կպակասի ազգային հպարտանքի նվիրական զգացումը»,- ցավով գրել է Գարեգին Նժդեհը:

Պատմության դասաժամերին է, որ աշակերտները, ուսուցչի օգնությամբ և ուղղորդմամբ, բացահայտում են, թե ովքեր են իրենք, ովքեր են իրենց նախնիները, որտեղ են ապրել, ինչ պատմություն ունեն, ինչ ներդրում ունեն համամարդկային մշակույթի ասպարեզում: Երբ աշակերտը ուսումնասիրում է հայոց պատմության հերոսական էջերը, ազատագրական պայքարի դրվագները, հերոսների անձնվիրումն ու հայրենասիրության բազում օրինակներ, ինքն էլ կարծես «վարակվում է» և անպայման ձգտում հասնել այդ կերպարներին: Դրա վառ օրինակը հենց Ղարաբաղյան պատերազմի մասնակից մեր հերոս հայորդիներն են, որոնք իրենց հայրերի ու պապերի օրինակով նետվեցին մարտի մոռանալով սեփական կյանքի մասին: Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը պիտի լինի՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են:

Հայոց պետականության ամրապնդման նպատակով անհրաժեշտ է դպրոցի կրթության և դաստիարակության բովանդակությունը հագեցնել ազգային մշակույթի արժեքներով՝ միաժամանակ ընդգծելով համամարդկայինը:

Փորձենք հասկանալ, թե ի՞նչպես է ձևավորվում ազգային արժեքային համակարգը, պետականության գաղափարի ամրապնդումը Հայոց պատմության դասերին: Չ՞է որ հայոց պատմության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալու իրականացնելու մեր իդձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը¹: Հայոց պատմությունը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը, պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին: Հենց այս պատճառով է, որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը²: Նախատեսվում է, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

- լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին, կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք:

1 Տես՝ Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002, էջ 65:

2 Տես՝ Ղուկասյան Ա., Հայոց պատմությունը 8-9 րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ: էջ 6 13

- Ունենա ազգային ինքնագիտակցություն
- Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- Ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում,
- Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը,
- Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը:
- Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն...

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեաքյին և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում³ :

Հայոց պատմությունն առարկայի ուսուցման նպատակները բազմազան են, սակայն առանձնացնենք նրանցից մեկը՝ զինել աշակերտներին ազգային արժեքներով: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիարակչական մի շարք կարևոր խնդիրներ⁴:

1. Սովորողներին զինել հին, միջնադարի, նոր և նորագույն ժամանակների հայոց պատմության ամբողջական գիտելիքներով, որոնց միջով կարմիր թելով պետք է անցնի ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությամբ բերելու գաղափարը: Այդ գիտելիքները

մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից: Հայոց պատմության խոր իմացությունը կօգնի մեր հանրապետության քաղաքացիներին կապվելու մայր հողին, տեր կանգնելու հայրենի տունն ու տեղին:

2. Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները, հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնագոհ սխրանքները:

3. Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների, առանձնահատկությունների մասին: Ծանոթացնել հայ ժողովրդի մշակույթային արժեքների և համամարդկային նվաճումների հետ: Ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին, պատմամշակութային կոթողներին:

4. Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը: Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ:

5. Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները , ինչպես են ընտանիք կազմել, սնվել ու հագնվել: Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին:

6. Բացահայտել պատմամշակութային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը: Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները:

7. Բացահայտել պատմական ճշմարտությունը, նշել, որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից:

3 Տես՝ Բաբանսկի Յու. -Մշակերտների դաստիարակությունը կոմպլեքսային մոտեցում: էջ 112
4 Տես՝ Ղուկասյան Ա, Հայոց պատմությունը 8-9 րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ: էջ 12 14

8. Դաստիարակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում: Ներարկել այն գաղափարը, որ հայրենիքին ու հայոց բանակին ծառայելը պատվի գործ է:

9. Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակութային այն միջավայրը, որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը:

10. Հասնել այն բանին, որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման, հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին:

11. Նպաստել մարդասիրության և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:

12. Ձևավորել սեփական գործունեությունը հանդուրժողականության և մարդու իրավունքների ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք ու կարողություն:

13. Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ:

14. Չարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստեղծագործական մտածողությունը հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները.

- Խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը, մտածողության ինքնուրույնությունը, սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները:

- Սովորեցնել տեղեկատվության աղբյուրներից օգտվելու, ժամանակակից տեղեկատվական հեղեղի մեջ կողմնորոշվելու, անհրաժեշտ տեղեկությունը ճիշտ ընտրելու, մշակելու, վերաձևակերպելու, այսինքն՝ գիտելիք կառուցելու կարողություններ:
- Ձևավորել պատմական դեպքերը, երևույթները համեմատելու, վերլուծելու, գնահատելու, ընդհանրացնելու և կանխատեսումներ կատարելու կարողություններ.
- Ջարգացնել ուսումնասության արդյունքում սովորողների ստացած գիտելիքները և տեսական դրույթները պատմական կենդանի նյութի վրա կոնկրետացնելու անցյալի, ներկայի հասարակական-քաղաքական երևույթների վերլուծության ժամանակ կիրառելու կարողություններ ու հմտություններ
- Ջարգացնել սովորողների զգայական ընկալման, մտավոր և հուզական ճանաչողության բոլոր տեսակներն ու կամային որակները (լսողություն, տեսողություն, կամք, համառություն) և մտավոր գործողությունները (համեմատում, համադրում և այլն):

Գործնական համատեքստ: Ժամանակակից դասին ներկայացվող կարևոր պահանջներից մեկն էլ ուսուցման մեթոդների ընտրությունն է, ավանդականի և նորագույնի վարպետ զուգակցումը: Պատմության դասին օգտագործվող արդյունավետ մեթոդներ են՝ Մտագրոհը, Վենի դիագրամը, T-աձև, M-աձև աղյուսակները, համառոտ դասախոսությունը, գաղափարների քարտեզագրում, խճանկարը, գծակարգեր ⁵ և այլն:

Համագործակցային ուսուցման ձևը նոր ժամանակների գլխավոր պահանջներից է և արդյունավետ ձև է: Այն շատ է կարևորվում ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: Խմբի անդամների համագործակցված աշխատանքը հնարավորություն է ընձեռում կարողությունների և հմտությունների, երևակայության տարբեր մակարդակ ունեցող աշակերտներին համախմբել ուժերը, ջանքերը ներդնել ընդհանուր նպատակին հասնելու գործում: Այս մեթոդը դասապրոցեսն ավելի

բազմազան, հետաքրքիր է դարձնում, բարձրացնում երեխաների ինքնագնահատականը, խթանում մոտիվացիան:

Ելնելով հետազոտության մեջ առաջադրված խնդիրներից կարելի է կիրառել հետևյալ մեթոդները⁶.

- Կերպարային քարտ. սա հրաշալի միջոց է պատմական կարևոր իրադարձությունները տարբեր կերպարների դիտանկյունից ուսումնասիրելու համար: Քարտը ներկայացնում է տվյալ իրադարձության կերպարների մտադրությունները, հուզական վիճակները, տեսանկյունները: Կերպարային քարտը կարող է կիրառվել պատմական ակտիվ մտածողություն խթանող տարատեսակ հարցադրումների քննարկաման համար:
- Քարտեզային քննարկում. քարտեզները հրաշալի միջոց են աշխարհագրական գիտելիքը պատմության արդյունավետ մաս դարձնելու, պատմության աշխարհագրական ընկալումը ձևակերպելու համար:
- Պատկերի ակնթարթային դիտում. սրանք վերլուծական հարուստ տեղեկություններ են պարունակում:
- Ճիշտ պատասխանի գուշակում. պատմության ուսուցումը կարելի է հարստացնել դասին զուգահեռ խաղերով՝ սովորողներին օգնելով պարբերաբար անրադառնալ արդեն անցած նյութի փաստական հատվածին

5. Լալայան Կ. Պատմության դասերի պլանավորման նմուշ -օրինակներ, Երևան 2009թ. էջ 6-8

6. Գիրք պատմության ուսուցման, ինչու՞, ինչպե՞ս, Պարադիգմա կրթական հիմնադրամ, 2020, էջ 39,49,69,73

Եզրակացություն

Մտորումներ մեր վաղվա պետականության մասին. Աշխատանքն ավարտելուց առաջ առաջարկում եմ մի պահ կանգ առնել ու մտորել մեր անցած ճանապարհի և վաղվա խնդիրների շուրջ:

Մեր առաջին պետական կազմավորումը գրավոր աղբյուրներում հիշատակվում է Ք.ա. III հազարամյակի առաջին կեսին, այսինքն՝ մեր պետականությունն ունի արձանագրված 5000-ամյա պատմություն: Այն ունեցել է բացառիկ վերելքների շրջաններ. Բազմիցս մենք հասել ենք աշխարհակալության աստիճանի, ընդ որում, երբեք չդառնալով բարբարոս ու չմեղանշելով քարեպաշտության սկզբունքների դեմ: Մենք ունեցել ենք նաև մեծ անկումներ, որոնցից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը մի մեծ դասագիրք պետք է դառնա մեր գալիք պետականության կերտման ճանապարհին:

XIV դարում հայկական պետականության անկումից հետո սկսվեց մեր պատմության ամենատևական ու ամենաձանր ճգնաժամը: Վեցդարյա մաքառումից ու ցեղասպանության ենթարկվելուց հետո մեր ժողովուրդն ուժ գտավ իր մեջ և վերականգնեց անկախ պետականությունը, ինչը նշանակում է, որ հայությունը չի սպառել իր պատմական առաքելությունը, հակառակ դեպքում վերացած և պատմության ասպարեզից հեռացած կլիներ վաղուց, ինչպես դրացի ժողովուրդներից շատերը: Սա ավելի է պարտավորեցնում մեզ՝ լրջորեն խորհելու մեր ազգի առաքելության և ինքնության խորհրդի մասին:

Մեր պատմության մեծագույն դժբախտությունների պատճառը դարձան Հայոց պետականության անկումը XIII-XIV դարերում և հայ ազնվականության՝ Հայոց աշխարհի տերերի խավի աստիճանական ոչնչացումը: Պատճառի գիտակցումը թելադրում է նաև հաղթահարման ճանապարհը: Այսօր անհրաժեշտ է ստեղծել նոր ազնվականություն և կերտել հայության առանձնահատկություններին ու հոգեկերտվածքին համապատասխանող կառավարման լավագույն համակարգ:

«Ազնվականություն» ասելով բնավ նկատի չունենք տոհմանունները, ծագումնաբանական վկայագրերը կամ «կապույտ արյան» մասին միջնադարյան հեքիաթները: Հայկական նոր ազնվականությունը պետք է կայանա Հայոց երկրի տերերի ու ազգի որդիների խավի վերականգնման ճանապարհով: Իսկ դրան հասնելու լավագույն ճանապարհը նոր սերնդի դաստիարակությունն է ազգային արժեհամակարգով: Այդ դաստիարակության համակարգի հիմքում պետք է լինի Մեծ Հայքի տեսլականը. ամեն հայ մանուկ իբրև իդեալ (կատերելատիպ) պետք է ունենա մեր պատմության մեծերին՝ սկսած Հայկ Նահապետից մինչև Արցախյան հերոսները:

Հայկ Ասատրյանը գրում է. «Հա՛յ, տու՛ր ցեղորեն արթնացած մի սերունդ, զարկող և զարկելով ստեղծագործող մի սերունդ, և պատմությունը քեզ պիտի վերադարձնի քո երկիրը»: Քառօրյա և 44-օրյա պատերազմական թեժ գործողությունները ցույց տվեցին, որ հերթական անգամ «ցեղորեն արթնացած » մի ողջ սերունդ պարզևած է մեր ազգին, և ճիշտ ժամանակն է այդ հզոր ներուժը օգտագործելու պետական շինության տարբեր ոլորտներում: Եվ այդ դեպքում լուրջ առաջընթացը երկար սպասել չի տա: Պետականության հարատևության պայքարի բոլոր մարտիկների կերպարը պետք է ոգեշնչման աղբյուր դառնա մեր վաղվա պետականության կերտման ճանապարհին: Այսօր անհրաժեշտ է ստեղծել համահայկական կառույց, որը հնարավորություն կտա հայությանը միավորել մեկ ազգային պետական համակարգում: Ե՛վ միջազգային ասպարեզում հաջողության հասնելու, և՛ հայության հարատևությունն ու զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է նախ և առաջ մաքրվել ու հզորանալ ներսում, հաղթահարել մեզանում տեղ գտած զանազան բարդությունները, որոնք մեզ կարող են ավելի վնասել, քան որևէ թշնամի: Դրանցից հաղթահարման լավագույն ճանապարհը ճշմարիտ ինքնաճանաչումն է, որը կբացառի մեզանում և՛ թերարժեքության, և՛ գերարժեքության բարդությունների հավասարաչափ վտանգավոր առկայությունը: Անցյալում և այսօր մեր ունեցած արժեքների անաչառ ճանաչողությունը մեզ կարող է բերել ազգային արժեհամակարգի հստակ վերականգնմանը և գիտակցմանը: Կարծում

եմ, որ դրա շնորհիվ հնարավոր կդառնա նաև ներազգային բարոյական ոգու (Գարեգին Նժդեհի բնորոշմամբ՝ «ներցեղային բարոյականության») վերականգնումը...

Այսպիսով, ամփոփելով հետազոտական աշխատանքս եկա այն համոզման, որ յուրաքանչյուր ազգի կայունության և անկախության կարևոր երաշխիքն է ճիշտ ազգային արժեքային համակարգի ստեղծումը և պահպանումը, պետականության գաղափարի ամրապնդումը, կայացած անհատներ դաստիարակելը: Պետականության հարատևության պայքարի բոլոր մարտիկների կերպարը պետք է ոգեշնչման աղբյուր դառնա մեր վաղվա պետականության կերտման ճանապարհին:

Գրականության ցանկ

1. Գևորգյան Ա., Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործում, Երևան 2002թ
2. Առարկայական Չափորոշիչներ <https://escs.am/am/news/8621>
3. Սարգսյան Ա.Ա. Համամարդկային և ազգային արժեքները սոցիալական տարբեր ինստիտուտներում, ԵՊՀ, հոդված, Իջևան, 2019
4. Արտակ Մովսիսյան, Հայոց պետականությունը, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011թ.
5. Հայագիտությունը դպրոցում, Գիտամեթոդական վերլուծական հանդես
6. Լալայան Կ., Պատմության դասերի պլանավորման նմուշ-օրինակներ, Երևան 2009
7. Ա.Ղուկասյան , Հայոց պատմություն, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2013:
8. Գիրք պատմության ուսուցման Ինչու՞, ինչպե՞ս, Պարադիգմա կրթական հիմնադրամ, Երևան 2020թ.: